† ՄԱՀԳՈՅԺ

Տ. Տ. ՄԵԼՔԻՍԵԴԵԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱՏԵԱՆ

Յուլիսի 12-ին երեկոյեան 5 ժամին երկարատև հիւանդութիւնից յետոյ Զմիւռնիայում ի Տէր հանգեաւ Ամենապատիւ Տ. Մելքիսեդեկ Արքեպիսկոպոս Մուրատեանը, Զմիւռնիայի Հայոց բազմարդիւն և սիրելի Առաջնորդը, Հայաստանեայց եկեղեցու ամենից փայլուն և անձնադիր հովիւներից մէկը։

Հանգուցեալ Մելքիսեդեկ սրբազանը իւր բազմակողմանի գործունէութեամբ Ռուսահայաստանում և Տաճկաստանում հանրածանօթ է ամենքին և ազգի միահաղոյն սիրոյն արժանացած խոշոր անձնաւորութիւններից մէկն է, որի ապացոյց կարող է համարուիլ այն նշանաւոր հանգամանքը, որ նա երկու անգամ, 1884-ին և 1885-ին համազգային ժողովներում թեկնածու է ընտրուած Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան։

Ուստի և Սրբազանի մահը մի անդարմանելի կորուստ է Հայ եկեղեցու, ամբողջ Հայ հոգևորականութեան, Հայ ժողովրդի և իւր բարեկամների համար։

Մեր սիրելի ուսուցչի և «Լումայ»-ի ընտրելագոյն աշխատակցի կորուստը խոր սգով համակեց և մեր ամբողջ խմբագրութիւնը, ուստի և մեր յիշողութիւնները հանգուցեալ սրբազանի մասին և նորա ընդարձակ գործունէութեան տեսութիւնը թողնում ենք «Լումայ»-ի հետևեալ համարին, ուր և կտանք նորա կենդանագիրը։

Ցիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի։

ԳԻՒՏ ա. Բ Ա.

ԱՂԷՔՍԱՆԴՐ ԹԱՐԽԱՆԵԱՆ

Յուլիսի 29-ին Բաթում քաղաքում սպանուեցաւ Ալէքսանդր Թարխանեանը և օգոստոսի 3-ին թաղուեց Թիֆլիսում։

Հանգուցեալ Թարխանեանը ընիկ ղղլարցի էր. նա իւր ուսումը ստացել էր Վլադիկաւկազի բէալական ուսումնարանում և լինելով չքաւոր ծնողաց զաւակ՝ ինքը իւր տուած մասնաւոր դասերով հոգում էր իւր սնունդը։ Աւարտելով բէալա-